

**ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

*Հարգելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով**:*

**Դատարան** դիմելու դեպքում Ձեր և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

**Ֆինանսական համակարգի հաշտարարին** դիմելու դեպքում Ձեր և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ **Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին** ՀՀ օրենքով սահմանված կարգով:

**Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն ԱՆՎՃԱԸ են:**

Բողոք ունենալու դեպքում Դուք նախնառաջ պետք է դիմեք «Ամերիաբանկ» ՓԲԸ: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը «Ամերիաբանկ» ՓԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

**Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան

Գտնվելու վայրը՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ  
Հեռ.՝ 582 322, 582 321, Էլ. հասցե՝ [info@fsm.am](mailto:info@fsm.am), Ֆաքս՝ 525 421, Կայք՝ [www.fsm.am](http://www.fsm.am)

**\*Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ Ամերիաբանկը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, հետևյալ պայմաններով՝**

- Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի նախատեսված է Բանկի իրավունքը միակողմանի նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին,
- Համաձայնագիրը կնքվել է մեկ տարի ժամկետով,
- Բանկը հրաժարվել է ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների դեպքում, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը, և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը:

Դա նշանակում է, որ Ամերիաբանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Ամերիաբանկի դեմ կայացված որոշումները, միայն այն գույքային պահանջների գործերով, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը, և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

**ՀՀ Կենտրոնական բանկ**

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6

Հեռ.՝ 592 697, Էլ. հասցե՝ [chairman@cba.am](mailto:chairman@cba.am), Ֆաքս՝ 565 496, Կայք՝ [www.cba.am](http://www.cba.am)

Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: